## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **04 հունիսի 2021թ.**

2021թ-ի ապրիլի 26-ից հունիսի 4-ը ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ նաև՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ էլեկտրատեխնիկայի ձեռքբերման ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Վրթանեսյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի փոխտնօրեն ՏՏ գծով, |
| Լ. Ղազարյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի համակարգչային տեխնիկայի, ցանցերի և հարակից սարքերի սպասարկման բաժնի պետ, |
| Թ. Զաքարյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պետ, |
| Ս. Հարությունյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պարետ, |
| Հ. Մազմանյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ցանցերի կառավարման բաժնի ցանցային ադմինիստրատոր: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Վրթանեսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի գնումների մասնագետ Հ. Գուլաբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ-ի ապրիլի 26-ին, ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի շենքում ժամը 09:15-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի համար գնման հայտով գին սահմանված չէ՝ Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն"

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Օդորակիչ | - |
| 2 | Հեռուստացույց | - |
| 3 | Գեներատոր | - |
| 4 | Դյուրակիր համակարգիչ | - |
| 5 | Դյուրակիր համակարգչի համալրող սարք | - |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Տեխնոթերմ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան Գր. Լուսավորիչ 3/81 | +374 60 75 99 75 | info@technotherm.am | 02702297 |
| 2 | «Արմփիթ» ՍՊԸ | ՀՀ, ք.Աբովյան, Կոտայքի 1/4 | +374 91 661536 | armpeat@gmail.com | 00912335 |
| 3 | «Կոնսէլ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արարատյան 90/2 | +374 10 465070 | sales@consel.am | 01539021 |
| 4 | «ՍԵԳ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 112 | +374 11 369000 , +374 77 660786 | seg_tender@mail.ru | 00878823 |
| 5 | «Լեմուր» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ա. Տիգրանյան 5/12 բն. 20 | +374 98 042913 | llclemur@gmail.com | 00899289 |
| 6 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 76/3 | +374 10 277833; +374 77 207401 | info@elcomp.am | 00057219 |
| 7 | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60 | +374 10 586060 | normaplusarmenia@gmail.com | 00053663 |
| 8 | «Զիգզագ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, տարածք 18, Նորդ Բիզնես Կենտրոն | +374 11 900800 | info@zigzag.am | 02500164 |
| 9 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | ՀՀ, ք.Երեւան , Ջավարյան 57/19 բն 142 | +374 55 656556 | karlos.baghramyan@gmail.com | 01569235 |
| 10 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30 | +374 91 404073 | khv_84@mail.ru:, eychgroup@gmail.com | 01254973 |
| 11 | «Մովսեսյան» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Զաքյան 3, 29 (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Պուշկինի 52-8/2) | +374 91 037788, +374 10 501883 | computerland@mail.ru | 02648041 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի իրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- **«ԱՐՄՓԻԹ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է անձը հաստատող փաստաթղթի տեսակը, միաժամանակ՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, նշվել է, որ **«ԱՐՄՓԻԹ» ՍՊԸ-ն** ցանկություն ունի մասնակցել **ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնին, սակայն ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի և գնային առաջարկը, համաձայն Հավելված 2-ի, ներկայացված են **ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար:
- **«ԿՈՆՍԷԼ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է ավտոմատ գործարկման ֆունկցիայի, փաթեթավորման և մատակարարման վերաբերյալ նկարագրությունները:
- **«ՍԵԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝
  - ✓ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:
  - ✓ ապրանքի ամբողջական նկարագրում, համաձայն Հավելված 1.1-ի, առաջարկվող ապրանքի բնութագիրը թերի է, մասնավորապես՝ ապրանքի գույնը հրավերով պահանջվել է, որպեսզի լինի մոխրագույն կամ սև, իսկ **«ՍԵԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված նկարագրում նշված է մոխրագույն կամ արծաթագույն: Արծաթագույնը ընդունելի չէ և չի համապատասխանում **ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:
- **«ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն **Հավելված** 1.1-ի, մասամբ թերի է և չի համապատասխանում **ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հրավերով պահանջվել է 14 դյույմ, իսկ **«ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ**-ի կողմից նշված է 14.5 դյույմ, որը ընդունելի չէ:
- **«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը թերի է, մասնավորապես՝

• «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Չափաբաժնի Անվանում | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | Մասնակիցների առաջարկած գները: Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1* | Օդորակիչ | «Տեխնոթերմ» ՍՊԸ | - | 4780000 | 956000 | 5736000 |
| | | «Կոնսէլ» ՍՊԸ | | 3683000 | 736600 | 4419600 |
| 2* | Հեռուստացույց | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | - | 1188750 | 237750 | 1426500 |
| | | «Զիգզագ» ՍՊԸ | | 1012500 | 202500 | 1215000 |
| | | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | | 1620000 | 0 | 1620000 |
| 3* | Գեներատոր | «Արմփիթ» ՍՊԸ | - | 3052667 | 610533 | 3663200 |
| | | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | | 5000000 | 1000000 | 6000000 |
| | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | | 5000000 | 1000000 | 6000000 |
| 4* | Դյուրակիր համակարգիչ | «ՍԵԳ» ՍՊԸ | - | 676000 | 0 | 676000 |
| | | «Լեմուր» ՍՊԸ | | 1700000 | 0 | 1700000 |
| | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | | 375000 | 75000 | 450000 |
| 5* | Դյուրակիր համակարգչի համալրող սարք | «ՍԵԳ» ՍՊԸ | - | 330000 | 0 | 330000 |
| | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | | 132500 | 26500 | 159000 |
| | | «Մովսեսյան» ՍՊԸ | | 328000 | 0 | 328000 |

*Հրավիրվել են բանակցություններ, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև.*

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել **«ԱՐՄՓԻԹ» ՍՊԸ-ին, «ԿՈՆՍԷԼ» ՍՊԸ-ին, «ՍԵԳ» ՍՊԸ-ին, «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ին, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ին** և

**«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. **«ԱՐՄՓԻԹ» ՍՊԸ-ի, «ԿՈՆՍԷԼ» ՍՊԸ-ի, «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Չ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-ին | «Տեխնոթերմ» ՍՊԸ՝ | բավարար |
| | «Կոնսէլ» ՍՊԸ՝ | բավարար |
| 2-րդ | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ՝ | բավարար |
| | «Զիգզագ» ՍՊԸ՝ | բավարար |
| | «Նորմա-պլյուս» ՍՊԸ՝ | բավարար |
| 3-րդ | «Արմփիթ» ՍՊԸ՝ | բավարար |
| | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ՝ | բավարար |
| 3-5-րդ | «Էյչ Գրուպ» ՍՊԸ՝ | բավարար |
| 4-րդ | «Լեմուր» ՍՊԸ՝ | բավարար |
| 4-5-րդ | «ՍԵԳ» ՍՊԸ՝ | բավարար |
| 5-րդ | «Մովսեսյան» ՍՊԸ՝ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հաշվի առնելով, որ ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակից/ներ/ի հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 2021թ-ի մայիսի 3-ին ժամը 09:30-ին ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Լոռո» սոցիալական

ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի շենքում՝ 20-րդ սենյակում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

03.06.2021թ-ին ժամը 09:30-ին հրավիրված բանակցությունները կայացան: Հրավիրված բանակցությունների նիստին ներկա էին «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի տնօրենները, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Արմֆիթ» ՍՊԸ-ի և «Կոնսէլ» ՍՊԸ-ի տնօրենների կողմից լիազորված ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նախագահը՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները հրապարակեց Հանձնաժողովի անդամների և նիստին ներկա մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացվեցին նոր գնային առաջարկներ, որոնք ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

| Չափաբաժնի | | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը* | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված/վերջնական գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | |
|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Գինը, առանց ԱԱՀ | Գինը, ներառյալ՝ ԱԱՀ |
| 1 | Օդորակիչ | - | «Տեխնոթերմ» ՍՊԸ | 2900000 | 3480000 |
| | | | «Կոնսէլ» ՍՊԸ | 2760000 | 3312000 |
| 2 | Հեռուստացույց | - | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | - | - |
| | | | «Զիգզագ» ՍՊԸ | - | - |
| | | | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | - | - |
| 3 | Գեներատոր | - | «Արմֆիթ» ՍՊԸ | 2870000 | 3444000 |
| | | | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 2990000 | 3588000 |
| | | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | - | - |
| 4 | Դյուրակիր համակարգիչ | - | «ՍԵԳ» ՍՊԸ | - | - |
| | | | «Լեմուր» ՍՊԸ | - | - |
| | | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | - | - |
| 5 | Դյուրակիր համակարգչի համալրող սարք | - | «ՍԵԳ» ՍՊԸ | - | - |
| | | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | - | - |
| | | | «Մովսեսյան» ՍՊԸ | - | - |

Այլ առաջարկներ չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափա | Մասնակցի | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|

| բաժնի N | Զբաղեցրած տեղ | Անվանում | մասնակցի դեպքում նշվում է "X" | առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | «Տեխնոթերմ» ՍՊԸ | | 2900000 |
| | 1 | «Կոնսէլ» ՍՊԸ | X | 2760000 |
| 2 | 2 | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | | 1188750 |
| | 1 | «Զիգզագ» ՍՊԸ | X | 1012500 |
| | 3 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | | 1620000 |
| 3 | 1 | «Արմփիթ» ՍՊԸ | X | 2870000 |
| | 2 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | | 2990000 |
| | 3 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | | 5000000 |
| 4 | 2 | «ՍԵԳ» ՍՊԸ | | 676000 |
| | 3 | «Լեմուր» ՍՊԸ | | 1700000 |
| | 1 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | X | 375000 |
| 5 | 3 | «ՍԵԳ» ՍՊԸ | | 330000 |
| | 1 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | X | 132500 |
| | 2 | «Մովսեսյան» ՍՊԸ | | 328000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Վրթանեսյան ________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Ղազարյան ________

Թ. Զաքարյան ________

Ս. Հարությունյան ________

Հ. Մազմանյան ________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ________